ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«04» 02 2022 թ.
№ 7/63/2-161

«ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02251665) տնօրեն Ն. Մանուկյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Գալշոյան36/51
էլ. հասցե՝ nerses.manukyan@yahoo.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ի միջև 12.11.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/16-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 160 հատ Մարտկոց՝ 3V (CR2) (ԱԿՄ 3V (CR2)), սակայն մատակարարված մարտկոցները չեն համապատասխանել պայանագրում նշված տեխնիկական բնութագրին (ենթակա չեն եղել լիցքավորման, այն ինչ պայամնագրով նախատեսված է եղել լիցքավորվող):

Հիմք ընդունելով գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմատիվ ակտերի պահանջներն ու պայմանագրի 2.1.7 2.1.7.1 կետի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. փետրվարի 3-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԻՆՏ.ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 293 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 1464 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 29 280 ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 43 920 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am